



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՑՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 10(430) 30 ապրիլի 2021թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|     | <b>ՑՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |   |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|
|     | <b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ<br/>ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>                                                                                                                                                                                                                                                                                                                    |   |
| 263 | «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 344-Ն որոշումը.....                                                                                                                                                 | . |
| 264 | «Արցախի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 348-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                            | . |
| 265 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 349-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                 | . |
| 266 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 712 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 350-Ն որոշումը..                                                                                                                                                                                                           | . |
| 267 | «Արցախի Հանրապետությունից անտառանյութի որոշ տեսակների արտահանումը արգելելու մասին» ԱՀ կառավարության N 351-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                     | . |
| 268 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 620-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 352-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                      | . |
| 269 | «Պետական լիազորված մարմին ճանաչելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի N 346, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի N 348 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և Արցախի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 353-Ն որոշումը..... | . |
| 270 | ««Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 357-Ն որոշումը.....                                                                                                              | . |
| 271 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 289 որոշման մեջ փոփոխություն                                                                                                                                                                                                                                                                      |   |

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |     |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
|     | կատարելու մասին» ԱՀ կառավարության N 364-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | .   |
| 272 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 390-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 367-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                                        | .   |
| 273 | «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 368-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | .   |
| 274 | «Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ԱՀ կառավարության N 376-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                                                 | .   |
| 275 | «Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և վարձու աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 377-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                             | .   |
| 276 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 6-ի N 133-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 386-Ն որոշումը .....                                                                                                                                                                                                                                                                                                          | ... |
| 277 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 84 որոշման մեջ փոփոխություններ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 969-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի N 328-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 11-ի N 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 387-Ն որոշումը..... | .   |
| 278 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 388-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                        | .   |
| 279 | «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության «Մոցիալական շտապ օգնության կենտրոն» ոչ կառավարչական հիմնարկ ստեղծելու և հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 389-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                | .   |
| 280 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 390-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                                          | .   |
| 281 | «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 17-ի N 222-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 392-Ն որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                                     | .   |
| 282 | «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2021» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառության մեջ դնելու մասին» ԱՀ կառավարության N 397-Ն                                                                                                                                                                                                                                                                                | .   |

|                                                                                                                                |                                                                                                                                                                                                                                                                                                                   |   |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|
|                                                                                                                                | որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                     | . |
| 283                                                                                                                            | «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Ը» սերիայի դրոշմապիտակները կիրառության մեջ դնելու մասին» ԱՀ կառավարության N 398-Ն որոշումը.....                                                                                                                          | . |
| <b>ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>                                                                                                          |                                                                                                                                                                                                                                                                                                                   |   |
| <b>ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b> |                                                                                                                                                                                                                                                                                                                   |   |
| 284                                                                                                                            | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 18-ի թիվ 39Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 30-Ա որոշումը.....    | . |
| 285                                                                                                                            | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 18-ի թիվ 40Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 31-Ա որոշումը..... | . |
| 286                                                                                                                            | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 29-ի թիվ 36Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 32-Ա որոշումը.....   | . |
| 287                                                                                                                            | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 10-ի N 74Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 33-Ա որոշումը.....  | . |
| 288                                                                                                                            | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 6-ի N 16Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 34-Ա որոշումը.....       | . |
| 289                                                                                                                            | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 35-Ա որոշումը..... | . |
| <b>ՏԱՄՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>                                                                                                         |                                                                                                                                                                                                                                                                                                                   |   |

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |   |
|-----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|
|     | <b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>                                                                                                                                                                                                                                                                                                   |   |
| 290 | «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև N 2-ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի մայիսի 31-ի N 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ վիճակագրության պետական խորհրդի N 14-Ն որոշումը..... | . |
|     | <b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>                                                                                                                                                                                                                                                       |   |
| 291 | ԱՀ վերաքննիչ դատարանի քրեական գործ ԸԻԴ/0060/01/2020թ. որոշումը.....                                                                                                                                                                                                                                                                                                    | . |

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

21 ապրիլի 2021թ.

N 344-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի NN 1, 3.2, 3.3 աղյուսակներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշման N 2 հավելվածի NN 1, 3.2, 3.3 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված

**«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՒ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱԾԽՈՒՄԸ  
ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

| Բաժին     | Խումբ    | Դաս       | Բյուջետային ծախսերի գործառու-<br>կան դասակարգման բաժինների,<br>խմբերի և դասերի, ֆինանսավոր-<br>վող ծրագրերի և վերջիններս<br>իրականացնող մարմինների<br>անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական<br>նշանով, իսկ նվազեցումները՝<br>փակագծերում) |                         |             |           |
|-----------|----------|-----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------|-------------|-----------|
|           |          |           |                                                                                                                                                                    | Առաջին<br>եռամ-<br>սյակ                                                                                    | Առաջին<br>կիսամ-<br>յակ | Ինն<br>ամիս | Տարի      |
|           |          |           | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>                                                                                                                                             | -                                                                                                          | -                       | -           | -         |
|           |          |           | այդ թվում՝                                                                                                                                                         | -                                                                                                          | -                       | -           | -         |
| <b>09</b> |          |           | <b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>                                                                                                                                                  | -                                                                                                          | -                       | -           | -         |
|           | <b>2</b> |           | <b>Տարրական, հիմնական և<br/>միջնակարգ ընդհանուր կրթություն</b>                                                                                                     | -                                                                                                          | -                       | -           | -         |
|           |          | 1         | Տարրական, հիմնական և<br>միջնակարգ ընդհանուր կրթություն                                                                                                             | -                                                                                                          | -                       | -           | -         |
|           |          | <b>01</b> | Պետական աջակցություն ԱՀ պետա-<br>կան հանրակրթական ուսումնական<br>հաստատություններին                                                                                | -                                                                                                          | 1 260,0                 | 1 260,0     | 1 260,0   |
|           |          |           | Ստեփանակերտի<br>քաղաքապետարան                                                                                                                                      | -                                                                                                          | 1 260,0                 | 1 260,0     | 1 260,0   |
|           |          | <b>03</b> | Պետական աջակցություն ԱՀ<br>շրջանների պետական հանրակր-<br>թական ուսումնական հաստատու-<br>թյունների տնօրենություններին                                               | -                                                                                                          | (1 260,0)               | (1 260,0)   | (1 260,0) |
|           |          |           | Մարտակերտի շրջանի<br>վարչակազմ                                                                                                                                     | -                                                                                                          | (1 260,0)               | (1 260,0)   | (1 260,0) |

**«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՒ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱԾԽՈՒՄԸ  
ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Բաժին     | Խումբ    | Դաս      | Ծրագրերի և կատարվողների<br>անվանումները                     | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական<br>նշանով, իսկ նվազեցումները՝<br>փակագծերում) |                         |             |         |
|-----------|----------|----------|-------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------|-------------|---------|
|           |          |          |                                                             | Առաջին<br>եռամ-<br>սյակ                                                                                    | Առաջին<br>կիսամ-<br>յակ | Ինն<br>ամիս | Տարի    |
| <b>09</b> | <b>2</b> | <b>1</b> | <b>Ստեփանակերտի<br/>քաղաքապետարան</b>                       | -                                                                                                          | 1 260,0                 | 1 260,0     | 1 260,0 |
|           |          |          | «Ստեփանակերտի Խ. Աբովյանի<br>անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | -                                                                                                          | 1 260,0                 | 1 260,0     | 1 260,0 |
|           |          |          | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                             | -                                                                                                          | 1 260,0                 | 1 260,0     | 1 260,0 |

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N3.3 ԱՂՑՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ  
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N145-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N3.3 ԱՂՑՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրերի և կատարվողների անվանումները                                              | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական<br>նշանով, իսկ նվազեցումները՝<br>փակագծերում) |                         |             |           |
|-------|-------|-----|-----------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------|-------------|-----------|
|       |       |     |                                                                                   | Առաջին<br>եռամ-<br>սյակ                                                                                    | Առաջին<br>կիսամ-<br>յակ | Ինն<br>ամիս | Տարի      |
| 09    | 2     | 1   | <b>Մարտակերտի շրջանի վարչակազմ</b>                                                | -                                                                                                          | (1 260,0)               | (1 260,0)   | (1 260,0) |
|       |       |     | «Մարտակերտի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ | -                                                                                                          | (1 260,0)               | (1 260,0)   | (1 260,0) |
|       |       |     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                   | -                                                                                                          | (1 260,0)               | (1 260,0)   | (1 260,0) |

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

22 ապրիլի 2021թ.

N 348-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ը ն ը զ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «ԾԿՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի մասին» N 343 որոշմամբ հաստատված թիվ 1, թիվ 3 և թիվ 4 հավելվածներում «Էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 449 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում «և սպորտի» բառերից առաջ լրացնել «, մշակույթի» բառը, «Էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով, իսկ «ոստիկանության պետի» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարի» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի կարգի 2-րդ, 38-րդ կետերում, Ձև N 1-ում, Ձև N 2-ում, Ձև N 6-ում և թիվ 2 հավելվածում «Էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով:

3. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 18-ի «Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական և (կամ) միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 926-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 770-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի Ձև N 1-ում, Ձև N 2-ում և NN 2,3 հավելվածներում «Էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

22 ապրիլի 2021թ.

N 349-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 506 որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածներում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի հանդիպումների և քննարկումների (աշխատանքի) կարգը հաստատելու մասին» N 102-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 1-ին և 4-րդ կետերում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով.

2) 14-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության» բառերով.

3) 22-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 24-ի N 102-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովին ռադիոհաճախականությունների որոշակի հատվածների առանձնացման վերաբերյալ հայտեր ներկայացնելու և քննարկելու կարգը հաստատելու մասին» N 895-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածի 1-ին կետում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով.

2) հավելվածի 1-ին և 2-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի «Ռադիոհաճախականության շերտերի կառավարական նշանակության սպեկտրի օգտագործման իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկը և կառավարական նշանակության սպեկտրի

ռադիոհաճախականության շերտերի հատկացման կարգը հաստատելու մասին» N 198-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով,

բ. 11-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

22 ապրիլի 2021թ.

N 350-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 712 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 712 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 5-րդ կետում «զարգացման» բառը փոխարինել «ենթակառուցվածքների» բառով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ և 17-րդ կետերում «զարգացման» բառը փոխարինել «ենթակառուցվածքների» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

22 ապրիլի 2021թ.

N 351-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹԻ  
ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ  
ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածը, հաշվի առնելով Արցախի Հանրապետության պետական անտառային ֆոնդի և անտառային պաշարների կտրուկ նվազումը, ինչպես նաև անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումն ապահովելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արգելել Արցախի Հանրապետության տարածքից գործափայտի, տեխնոլոգիական փայտի, վառելափայտի, կողահան և ոչ կողահան տախտակի, եզրատախտակի, տակառատախտակի, բրիկետի, մանրատախտակի և փայտածուխի (բացառությամբ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը արտադրված փայտածուխի) արտահանումը (բացառությամբ վերաարտահանման):

2. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ վերահսկողություն սահմանել որոշման իրականացման նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2021թ.

N 352-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 620-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տրանսպորտային տեսչության, շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության, հեռահաղորդակցության հանրապետական գործակալության կանոնադրությունները հաստատելու, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 457-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 620-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում՝

ա. «ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ» բառերը փոխարինել «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ» բառերով,

բ. «, ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ» բառերը հանել.

2) որոշման նախաբանից հանել «, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 46-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 34-րդ կետին» բառերը.

3) ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը.

4) որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով.

5) որոշմամբ հաստատված NN1,2,4 հավելվածների վերնագրերում «ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ» բառերը փոխարինել «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ» բառերով.

6) որոշմամբ հաստատված NN 1, 2 հավելվածների 1-ին և 2-րդ կետերում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով.

7) որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 1-ին և 3-րդ կետերում «էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2021թ.

N 353-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 346, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 348 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածը, Ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Տրանսպորտի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, «Փոստային կապի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, «Ավիացիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածը, «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» օրենքի 5-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ճանաչել պետական լիազորված մարմին՝

- 1) անտառների կայուն կառավարման ոլորտում.
- 2) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում.
- 3) էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում.
- 4) տրանսպորտային համակարգի բնագավառում.
- 5) փոստային կապի բնագավառում.

6) ավիացիայի (բացառությամբ ռազմական) և օդային տրանսպորտի բնագավառում.

7) էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության ոլորտում:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «Էներգահանալուծության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնի իրավասությունները Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը վերապահելու մասին» N 346 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «Է ԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ» բառերը փոխարինել «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ» բառերով.

2) որոշման տեքստում «Էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «Փոստային կապի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին ու փոստային կապի ազգային օպերատոր սահմանելու և փոստային կապի ազգային օպերատորին փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման լիազորություններ տալու մասին» N 348 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հանել «ՓՈՍՍԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՈՒ» բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետը:

4. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 27-ի «Լիազոր մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի N 823-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 256-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 27-ի «Լիազորված մարմին ճանաչելու մասին» N 968, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 27-ի «Լիազորված մարմին ճանաչելու մասին» N 969, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի «Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 24-ի N 162-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 170-Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 31-ի «Լիազոր մարմին ճանաչելու մասին» N 516 որոշումները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

22 ապրիլի 2021թ.

N 357-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂՑԵԼՈՒ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ հոդվածը և 9-րդ հոդվածի 1-ին կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Ստեղծել «Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ**  
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ նաև նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Արցախի Հանրապետության օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բնագավառներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարությունը գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների, իրավական այլ ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

4. Նախարարության լրիվ անվանումն է՝

1) հայերեն լրիվ անվանումը՝ Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարություն:

2) ռուսերեն լրիվ անվանումը՝ Министерство внутренних дел Республики Арцах.

3) անգլերեն լրիվ անվանումը՝ Ministry of Internal Affairs of the Republic of Artsakh:

5. Նախարարությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր, ինչպես նաև կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն և այլ լեզուներով կլոր կնիք և ձևաթղթեր: Նախարարությունը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի առաջին տեղակալից (այսուհետ՝ տեղակալ), խորհրդականից, մամուլի քարտուղարից, օգնականից, նախարարության աշխատակազմից և նախարարության կառավարման ոլորտում գործող Արցախի Հանրապետության ոստիկանությունից ու Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունից (այսուհետ՝ նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմիններ), ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

7. Նախարարության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Ազատամարտիկների 38:

**2. ՆԱԽԱՐԱՐ ՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

8. Նախարարության նպատակներն են՝ նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների գործունեության բնագավառներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումը և իրականացումը:

9. Նախարարության խնդիրներն են՝

1) նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրության կատարելագործումը և գործունեության համակարգումը:

2) լիազորված բնագավառներում տիրող իրավիճակի գնահատումը և վերլուծությունը:

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման ապահովումը:

**3. ՆԱԽԱՐԱՐ ՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

10. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների՝

ա. գործունեության բարեփոխումների ռազմավարական պլանավորումը,

բ. գործունեության բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, ինչպես նաև գործունեության բնագավառը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը,

գ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, իրավապահ այլ մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ համագործակցության ապահովումը,

դ. գործունեության ընթացքում առաջացող խնդիրների ու սումմասիրումը, գնահատումը, վերլուծությունը, այդ խնդիրները հաղթահարելու ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկումը,

ե. ընդհանուր գործունեության կազմակերպումն ու մեթոդական ղեկավարումը.

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ իրականացումը:

#### 4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Նախարարության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահը: Նախարարությունը գլխավորում է Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ նախարար), որը կառավարում է նախարարության համակարգի մեջ ընդգրկված պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը:

12. Արցախի Հանրապետության Նախագահը՝

1) իրականացնում է նախարարության ընդհանուր ղեկավարումը.

2) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է նախարարին.

3) նախարարի ներկայացմամբ պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում նախարարի տեղակալին.

4) լսում է նախարարության գործունեության մասին հաշվետվությունները:

13. Նախարարը՝

1) հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին.

2) առաջարկություն է ներկայացնում իր տեղակալին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ.

3) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և իրավական այլ ակտերով.

4) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի գնահատման և վերլուծության համար.

5) քննում է նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների գործունեության ստուգման արդյունքները.

6) իրականացնում է նախարարության աշխատակազմի կառավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության, նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքները.

8) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

9) վերահսկողություն է իրականացնում նախարարության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ:

10) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի աշխատողների թիվը:

11) կատարում է իր տեղակալի, խորհրդականի և օգնականի միջև աշխատանքի բաշխումը:

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է նախարարության համակարգի ծառայողներին և աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

13) նախարարության գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի քննարկման, առանձին բնագավառներում առկա խնդիրների լուծման նպատակով կարող է ստեղծել խորհրդակցական մարմիններ, հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր՝ որոշելով դրանց անհատական կազմերը, գործունեության շրջանակներն ու իրավասության սահմանները:

14) իր իրավասության սահմաններում ընդունում է հրամաններ, տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով:

15) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շնորհում է դասային և հատուկ կոչումներ, ինչպես նաև դրանք շնորհելու համար Արցախի Հանրապետության Նախագահին ներկայացնում միջնորդություններ:

16) տրամադրում է արձակուրդ իր տեղակալին և նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

17) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

14. Նախարարի բացակայության ժամանակ նրա հանձնարարությամբ նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալը:

15. Նախարարի տեղակալը՝

1) համակարգում է նախարարության աշխատակազմի աշխատանքները, դրանց ապահովման նպատակով տալիս ցուցումներ և հանձնարարականներ ու վերահսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ:

2) պարբերաբար նախարարին ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին:

3) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին:

4) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները:

5) իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառներում կատարվող աշխատանքների ուսումնասիրությունները և ընթացքի օպերատիվ վերլուծությունը:

6) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ:

7) իրեն հանձնարարված բնագավառում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները:

8) նախարարին ներկայացնում է առաջարկություններ իր իրավասությանը վերապահված բնագավառում առաջացած հարցերի վերաբերյալ:

9) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում և նախարարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառնություններ և լիազորություններ:

16. Նախարարի խորհրդականը՝

1) համաձայնեցնելով նախարարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագրերը:

2) պարբերաբար նախարարին է ներկայացնում զեկույցներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի,

երևույթների և իրադարձությունների մասին ու առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

3) նախարարի հանձնարարությամբ կարող է կազմակերպել քաղաքացիների ընդունելություն.

4) նախարարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.

5) նախարարի որոշմամբ կարող է ղեկավարել նախարարի կողմից կազմավորած աշխատանքային խմբերի, հանձնաժողովների գործունեությունը կամ մասնակցել դրանց աշխատանքներին.

6) նախարարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

7) կատարում է նախարարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

17. Նախարարի օգնականը

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում նախարարին.

2) կազմակերպում է նախարարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.

3) համագործակցելով նախարարության աշխատակազմի հետ՝ նախարարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

4) նախապատրաստում և նախարարին է ներկայացնում աշխատանքային ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ.

5) կատարում է նախարարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

18. Նախարարի մամուլի քարտուղարը՝

1) նախարարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է Արցախի Հանրապետության և օտարերկրյա պետությունների տեղեկատվության միջոցներին.

2) անցկացնում է ասուլիսներ և ճեպագրույցներ.

3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում նախարարին և նախարարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը.

4) կազմակերպում է նախարարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ.

5) նախարարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով.

6) կատարում է նախարարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

19. Նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառնություններն արդյունավետ իրականացնելու նպատակով նախարարին կից կարող է ստեղծվել կոլեգիա: Նախարարին կից կոլեգիան՝

1) օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին.

2) նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը.

3) նախարարի հանձնարարությամբ քննարկում է այլ կարևորագույն հարցեր:

20. Նախարարի սահմանած գործառնությունները և հանձնարարականները կատարելիս՝ նախարարի խորհրդականը, նախարարի օգնականը և նախարարի մամուլի քարտուղարը համագործակցում են միմյանց, նախարարության համակարգի մարմինների, նախարարության աշխատակազմի և պաշտոնատար անձանց հետ:

## 5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԸ

21. Նախարարության աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

22. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Մտեփանսկերտ, Ազատամարտիկների 38:

23. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարությանը օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև

քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

24. Նախարարության աշխատակազմը գործում է Քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

25. Նախարարության աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է Արցախի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

26. Նախարարության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանամբ կլոր կնիք: Նախարարության աշխատակազմը կարող է ունենալ իր անվանամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

27. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

28. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

29. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:

30. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

31. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

32. Նախարարության աշխատակազմը վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով ու պայմաններով:

## 6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

33. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունն ու նախարարը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

34. Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

35. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրա մեջ կատարվող փոփոխությունները.

3) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը:

36. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝

1) օրենքով, իրավական այլ ակտերով, նախարարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության ու նախարարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված վնասի համար (նախարարության աշխատակազմի

ղեկավարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար)։

3) պարտավոր է չկատարել հիմնադրի և նախարարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները։

4) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող։

5) օրենքով իրավական այլ ակտերով, հիմնադրի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները։

6) տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով։

7) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների իրականացումը։

8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին և տեխնիկական սպասարկումն ապահովող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ։

9) օրենքով իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում ընդունում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ։

10) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար։

11) նախարարին է ներկայացնում առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործու նեղության հիմնական ուղղությունների վերաբերյալ։

12) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը։

13) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը։

14) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից՝ սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը։

15) նախարարի ստորագրությանն է ներկայացնում նախարարի հրամանները։

16) ապահովում է համագործակցությունն Արցախի Հանրապետության պետական իշխանության այլ մարմինների աշխատակազմերի հետ։

17) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները։

18) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ։

37. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նախարարի հրամանով նրան փոխարինում է նախարարության աշխատակազմի ծառայողներից մեկը։

## **7. ՆԱԽԱՐԱՐ ՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ**

38. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք

բերված և նախարարության աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ՝ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

39. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

40. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, իրավական այլ ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:

#### **8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

41. Նախարարության աշխատակազմը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

42. Նախարարության աշխատակազմի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

43. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. Լ. ԱԶԱՐՅԱՆ**

**Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ**  
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԻ**

- 1) աշխատակազմի ղեկավար
- 2) իրավաբան
- 3) գլխավոր հաշվապահ
- 4) գործավար

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. Լ. ԱԶԱՐՅԱՆ**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

23 ապրիլի 2021թ.

N 364-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 28-Ի N 289 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Լիազոր մարմին ճանաչելու մասին» N 289 որոշման մեջ «Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

26 ապրիլի 2021թ.

N 367-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 20-Ի N 390-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի «Կառավարում» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 390-Ն որոշման 3-րդ կետում «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

26 ապրիլի 2021թ.

N 368-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 593 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նախիջևանի կի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,9232 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

27 ապրիլի 2021թ.

N 376-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՂՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ  
«ԴԻԶԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածը և «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 13-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ շաբաթական հնգօրյա և օրական 10,5 ժամյա տևողությամբ:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործառույթների իրականացումն է:

3. Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե», «է» ենթակետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի վարչակազմին:

4. Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել՝

ա. Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը,

բ. Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 27-ի N 131 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, և այն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման.

2) ձևավորել Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի «Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմինը և ապահովել նրա գործունեությունը:

5. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝

«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի 09 բաժնի 1 խմբի 1 դասի «03 Նախադպրոցական հիմնարկներ» ծրագրով նախատեսված գումարից Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի վարչակազմին 2021 թվականին հատկացնել 36 628 400 (երեսունվեց միլիոն վեց հարյուր քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

որից առաջին կիսամյակում՝ 6 589 000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսուն ինը հազար) ՀՀ դրամ, ինն ամսում՝ 23 810 000 (քսաներեք միլիոն ութ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 451100 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով)՝ Արցախի Հանրապետության Հաղորթի շրջանի ««Դիզակ» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի պահպանման ծախսերն իրականացնելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

27 ապրիլի 2021թ.

N 377-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԶԻԴԵՆՏ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂ ՈՒՆԵՑՈՂ  
ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է**.

1. Սահմանել Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և վարձու աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԶԻԴԵՆՏ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՐ ՈՒՆԵՑՈՐ**  
**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՍԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՐՈՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և վարձու աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերին պետական աջակցություն (այսուհետ՝ պետական աջակցություն) տրամադրելու հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի դրույթները տարածվում են նաև Արցախի Հանրապետությունում հաշվառված մասնաձև ղեռի, ինչպես նաև 2021 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում նոր ստեղծված (գրանցված կամ հաշվառված) կազմակերպություններին և վարձու աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում հիմնադրամների, հասարակական միավորումների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, ոչ առևտրային կոոպերատիվների, կուսակցությունների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների, բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի փոխանակման կետերի վրա:

3. Պետական աջակցությունը տրամադրվում է Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպությունների և վարձու աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ շահառու) կողմից Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)՝ Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 18-ի N 9-Ա որոշմամբ սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա համար «Եկամտային հարկի մասին» օրենքով սահմանված ժամկետում, իսկ 2021 թվականի հունվար ամսվա համար՝ մինչև 2021 թվականի մարտի 22-ը, ներկայացված եկամտային հարկի ամսական հաշվարկներով վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, եթե շահառուն նույն ժամկետում ամբողջությամբ կատարել է տվյալ ամսվա համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի ամսական հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը:

4. Կոմիտեի կողմից Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 18-ի N 9-Ա որոշմամբ սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվա հաջորդող երկրորդ ամսվա 3-ը ներառյալ, ստուգվում են շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերը, կատարվում պետական աջակցության մեծության հաշվարկ, կազմվում է հայտ և ներկայացվում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն: 2021 թվականի փետրվար ամսվա հայտում ներառվում է նաև 2021 թվականի հունվար ամսվա եկամտային հարկի հաշվարկը մինչև 2021 թվականի մարտի 22-ը ներառյալ ներկայացրած և նույն ժամկետում վճարում կատարած, սակայն նախորդ հայտում չներառված շահառուների մասով վճարման ենթակա պետական աջակցության գումարը:

5. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, հիմք ընդունելով կոմիտեից ստացված հայտը, հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական աջակցության գումարը փոխանցում է կոմիտեի կողմից շահառուին սպասարկող բանկում բացված տարանցիկ հաշվին:

6. Շահառուին սպասարկող բանկում բացված տարանցիկ հաշվին գումարը մուտքագրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի կողմից շահառուին սպասարկող բանկ է ներկայացվում վճարման հանձնարարական (վճարման ցուցակ), որում նշվում են հետևյալ տվյալները՝

- 1) շահառուի անվանումը.
- 2) շահառուի ՀՎՀՀ-ն.
- 3) հաշվի համարը.

4) պետական աջակցության գումարի չափը:

7. Շահառուի բանկային հաշիվը ընտրվում է կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության հիման վրա: Բանկային հաշիվ չունեցող շահառուներին մինչև վճարման հանձնարարականի կազմումը ուղարկվում է ծանուցում՝ բանկային հաշիվ բացելու անհրաժեշտության վերաբերյալ:

8. Վճարման հանձնարարականը (վճարման ցուցակը) ներկայացնելուց հետո կոմիտեն շահառուներին ուղարկում է շահառու հանդիսանալու վերաբերյալ ծանուցում:

9. Մինչև 2021 թվականի հուլիսի 20-ը շահառուների կողմից պետական աջակցություն ստացած որևէ ամսվա համար եկամտային հարկի ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում, որի արդյունքում աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով նախկինում հայտարարագրված եկամտային հարկի պարտավորությունը՝

1) եթե նվազում է պետական աջակցության գումարից, ապա տարբերության չափով նվազեցվում է հերթական ամսվա պետական աջակցության գումարը: Հերթական ամսում աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով եկամտային հարկի պարտավորության բացակայության դեպքում ավել վճարված գումարը ենթակա է վերադարձման Արցախի Հանրապետության պետական բյուջե:

2) եթե ավելանում է պետական աջակցության գումարից, ապա տարբերությունը հաշվի չի առնվում հերթական ամսվա պետական աջակցությունը տրամադրելիս:

10. Կոմիտեն, ըստ անհրաժեշտության, շահառուների մոտ կարող է իրականացնել պետական աջակցության ճշտությանն ուղղված ուսումնասիրություններ, որոնց արդյունքներով խախտումներ հայտնաբերելու դեպքում ավել վճարված պետական աջակցության գումարը շահառուների կողմից ենթակա է վերադարձման Արցախի Հանրապետության պետական բյուջե:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՌԻԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽՍՏԱԿ ԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐ ՌԻԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉ ՌԻԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

28 ապրիլի 2021թ.

N 386-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 6-ի «Միանվագ դրամական օգնության մասին» N 133-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետում, 3-րդ կետում և որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ կետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

ա. 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն կարգի 2-րդ կետի 1-2.1.1-ին ենթակետերով սահմանված անձանց 2020 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հանրաքվեի և Սահմանադրության օրվա, 2021 թվականի մայիսի 9-ի՝ Հաղթանակի տոնի, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ դրամական օգնություն վճարվում է, եթե դրամական օգնության իրավունքը ծագել է մինչև համապատասխան հիշարժան օրը (ներառյալ)՝ դիմումը և համապատասխան փաստաթղթերը մինչև 2021 թվականի օգոստոսի 10-ը ներկայացնելու դեպքում:»,

բ. 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«2021 թվականի մայիսի 9-ի՝ Հաղթանակի տոնի, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ վճարվող դրամական օգնության հետ միասին վճարվում են նաև չստացած՝ 2020 թվականի սեպտեմբերի 2-ի՝ Արցախի Հանրապետության օրվա ու դեկտեմբերի 10-ի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հանրաքվեի և Սահմանադրության օրվա կապակցությամբ սահմանված դրամական օգնության գումարները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 ապրիլի 2021թ.

N 387-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ,  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 969-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑ ՈՒՄՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 328-Ն ԵՎ ԱՐՑԱՄԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի  
N 241-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի՝

1) ընտանիքի և երեխաների հիմնահարցերի վարչությունը վերանվանել սոցիալական վճարումների քաղաքականության և ընտանիքի հիմնահարցերի վարչություն.

2) աշխատանքի և զբաղվածության գործակալությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել աշխատանքի և զբաղվածության բաժին.

3) մոնիթորինգի և վերլուծության բաժնի գործունեությունը դադարեցնել.

4) վերահսկողության բաժինը վերանվանել վերահսկողության և մոնիթորինգի բաժին.

5) ժողովրդագրության և միգրացիայի վարչությունը վերանվանել միգրացիայի և ժողովրդագրական հարցերի վարչություն.

6) սոցիալական ապահովության պետական գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) վերանվանել «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալություն՝ միաժամանակ.

ա. գործակալության Հաղորդի սոցիալական ապահովության տարածքային բաժնի, Շուշիի սոցիալական ապահովության տարածքային բաժնի, Շահումյանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի և Քաջաթաղի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գործունեությունը դադարեցնել.

բ. գործակալության Ստեփանակերտի սոցիալական ապահովության տարածքային բաժինը և նախարարության աշխատակազմի Ստեփանակերտի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության կենտրոնական բաժին և Ստեփանակերտի բաժին,

գ. գործակալության Մարտակերտի սոցիալական ապահովության տարածքային բաժինը և նախարարության աշխատակազմի Մարտակերտի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության Մարտակերտի բաժին,

դ. գործակալության Մարտունու սոցիալական ապահովության տարածքային բաժինը և նախարարության աշխատակազմի Մարտունու

սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը միաձուլման ձևով վերակազմակերպել «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության Մարտունու բաժին,

ե. գործակալության Ասկերանի սոցիալական ապահովության տարածքային բաժինը և նախարարության աշխատակազմի Ասկերանի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը միաձուլման ձևով վերակազմակերպել «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության Ասկերանի բաժին,

զ. գործակալության կենսաթոշակային քաղաքականության բաժնի գործունեությունը դադարեցնել,

է. ստեղծել գործակալության սպասարկման որակի վերահսկման բաժին,

ը. գործակալության կենսաթոշակային ապահովության վերլուծության բաժինը վերանվանել վերլուծությունների և ռիսկերի կառավարման բաժին.

7) Հաղորդի սոցիալական ծառայության տարածքային գործակալության, Շուշիի սոցիալական ծառայության տարածքային գործակալության, Շահումյանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության և Քաշաթաղի սոցիալական ծառայության տարածքային գործակալության գործունեությունը դադարեցնել.

8) ընդհանուր բաժինը վերակազմավորման ձևով վերակազմակերպել վարչության կարգավիճակով՝ քարտուղարություն:

2. Նախարարության համակարգում ստեղծել ոչ կառավարչական հիմնարկի կարգավիճակով գործող սոցիալական շտապ օգնության կենտրոն:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի մարտի 16-ի «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 84 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 6-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նախարարության համակարգում ոչ կառավարչական հիմնարկի կարգավիճակով գործում են նախարարության սոցիալական շտապ օգնության կենտրոնը և տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնը:».

2) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչությունը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալության վերակազմակերպելու և գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» N 969-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում և որոշմամբ հաստատված N 1 հավելվածի վերնագրում «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ» բառերը փոխարինել «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերով.

2) որոշման 1-4-րդ կետերում, որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետում, 6-րդ կետի 1-ին ենթակետում «սոցիալական ապահովության

պետական» բառերը փոխարինել «Միասնական սոցիալական ծառայություն» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ուսերեն լրիվ` Агентство «Единая социальная служба» министерства труда, социальных и миграционных вопросов Республики Арцах».

4) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում, 9-րդ կետի 5.1-ին և 8-րդ ենթակետերում «կենսաթոշակների» բառից հետո լրացնել «պետական նպաստների» բառերը.

5) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետի 3-րդ և 11-րդ ենթակետերում «կենսաթոշակների» բառից հետո լրացնել «, պետական նպաստների» բառերը.

6) որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ` համաձայն N 2 հավելվածի:

5. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության բաժինը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության գործակալության վերակազմակերպելու և գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին» N 328-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 11-ի «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 241-Ն որոշումները:

6. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարին սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել նախարարության սոցիալական շտապ օգնության կենտրոնի կանոնադրությունը և կառուցվածքը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մայիսի 1-ից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի ապրիլի 28-ի N 387-Ն որոշման

«Հավելված թիվ 2  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարության 2004 թվականի  
մարտի 16-ի N 84 որոշման

**Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ**  
**ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԻ**

**I. Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք ԱՅԻՆ ԱՏՈՐ ԱԲԱԺ ԱՆՈՒՄՆԵՐ**

**1. Վարչություններ**

- Սոցիալական վճարումների քաղաքականության և ընտանիքի հիմնահարցերի վարչություն
- Ընտանիքների կարիքավորության գնահատման և սոցիալական աջակցության վարչություն
- Միգրացիայի և ժողովրդագրական հարցերի վարչություն
- Բնակարանային հարցերի վարչություն
- Ֆինանսատնտեսագիտական վարչություն
- Քարտուղարություն

**2. Բաժիններ**

- Աշխատանքի և զբաղվածության բաժին
- Բարեգործական ծրագրերի համակարգման բաժին
- Իրավաբանական բաժին
- Վերահսկողության և մոնիթորինգի բաժին
- Տեղեկատվության և հանրային կապերի բաժին
- Տեղեկատվական ծրագրերի և համակարգչային սպասարկման բաժին

**II. ԱՌԱՋՆԱՑՎԱԾ ԱՏՈՐ ԱԲԱԺ ԱՆՈՒՄՆԵՐ**

«Միասնական սոցիալական ծառայություն» գործակալություն  
Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿ ԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

Հավելված N2  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի ապրիլի 28-ի N 387-Ն որոշման

«Հավելված N2  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարության 2013 թվականի  
դեկտեմբերի 28-ի N 969-Ն որոշման

**Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**  
**ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻԱՄՆԱԿԱՆ**  
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌՍՑՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

**I. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ**

1. Սպասարկման որակի վերահսկման բաժին
2. Վերլուծությունների և ռիսկերի կառավարման բաժին
3. Ֆինանսական հոսքերի կառավարման բաժին

**II. ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ**

1. Կենտրոնական բաժին
2. Ստեփանակերտի բաժին
3. Մարտակերտի բաժին
4. Մարտունու բաժին
5. Ասկերանի բաժին»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 ապրիլի 2021թ.

N 388-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 709 և 2009 թվականի հունվարի 29-ի N 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի «ԱՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) բաժնի վերնագրում «ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ» բառը փոխարինել «ՄԻԳՐԱՑԻԱՑԻ» բառով.

2) բաժնի «Բժշկասոցիալական փորձաքննության կենտրոն» տողը և 14-19-րդ տողերն ուժը կորցրած ճանաչել.

3) բաժնում լրացնել հետևյալ բովանդակությամբ «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն» տող և 19.1-19.4-րդ տողեր.

«

|      |                                                |      |
|------|------------------------------------------------|------|
|      | Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն |      |
| 19.1 | Հանձնաժողովի նախագահ                           | 5,85 |
| 19.2 | Բաժնի պետ                                      | 3,88 |
| 19.3 | Հանձնաժողովի բժիշկ մասնագետ                    | 5,0  |
| 19.4 | Բաժնի բժիշկ մասնագետ, հոգեբան                  | 3,5  |

».

4) բաժնի 20-21-րդ տողերը շարադրել հետևյալ իմ բազրությամբ.

«

|    |                    |      |
|----|--------------------|------|
| 20 | Կենտրոնի տնօրեն    | 3,11 |
| 21 | Սոցիալական աշխատող | 1,96 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի ապրիլի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

28 ապրիլի 2021թ.

N 389-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՈՉ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է.**

1. Ստեղծել Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության «Սոցիալական շտապ օգնության կենտրոն» ոչ կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության «Սոցիալական շտապ օգնության կենտրոն» ոչ կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի մայիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



**ԿԱՆՈՆԱԴՐ ՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ**  
**ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ**  
**ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՈՉ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) սոցիալական շտապ օգնության կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) նախարարության կազմում գործող ոչ կառավարչական հիմնարկ է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մատուցում է սոցիալական աջակցության տրամադրման, սոցիալական խնդիրների արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական աշխատանքի իրականացման ծառայություններ՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Կենտրոնը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Կենտրոնը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարի (այսուհետ՝ նախարար) ներկայացմամբ:

3. Կենտրոնի լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

4. Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Կենտրոնն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Կենտրոնն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

**2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

7. Կենտրոնի գործունեության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակվող՝ սոցիալական և սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերումը:

2) Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակվող ընտանիքների եկամուտների, սոցիալական պայմանների, կարիքների ուսումնասիրությունը և գնահատումը:

3) Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակվող ընտանիքների աջակցության տեսակների և չափերի որոշումը՝ ըստ գնահատված կարիքների:

4) Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակվող ընտանիքներին աջակցության տրամադրումը՝ ըստ գնահատված կարիքների:

**3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

8. Կենտրոնն իրականացնում է հետևյալ գործառնությունները:

1) սոցիալական մոնիթորինգի կազմակերպում՝ տնային այցելությունների միջոցով ընտանիքների եկամուտների, սոցիալական պայմանների, կարիքների ուսումնասիրություն և գնահատում:

2) պետական և տարածքային կառավարման մարմիններից ընտանիքների եկամուտների, սոցիալական պայմանների, կարիքների վերաբերյալ տեղեկատվության ստացում:

3) մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա համալիր վերլուծության իրականացում, սոցիալական աջակցության տեսակների և չափերի որոշում:

4) սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին աջակցության տրամադրման կազմակերպում և դրա պատշաճ մակարդակի ապահովում:

5) սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն:

6) սոցիալական սպասարկման և սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովում:

7) նախարարության թեժ գծի սպասարկում՝ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին հրատապ լուծում և խորհրդատվության տրամադրում:

#### 4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Կենտրոնը կառավարում և նրա գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է նախարարը:

10. Կենտրոնի անմիջական ղեկավարումն իրականացնում է կենտրոնի տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը: Կենտրոնի տնօրենն անմիջականորեն ենթակա և հաշվետու է նախարարին:

11. Կենտրոնի աշխատակիցները քաղաքացիական աշխատանք կատարողներ են, նրանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է նախարարը:

12. Կենտրոնի տնօրենն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Մահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով և միջազգային պայմանագրերով, նախարարության և սույն կանոնադրություններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Նախարարը օրենքով և նախարարության կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կենտրոնի տնօրենի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հանձնարարականները, կարգադրություններն ու ցուցումները:

13. Կենտրոնի տնօրենը պատասխանատու է սույն կանոնադրությամբ սահմանված գործառնությունների որակի, ինչպես նաև դրանց՝ օրենքների և այլ իրավական ակտերի համապատասխանության համար:

14. Կենտրոնի տնօրենը

1) ղեկավարում է կենտրոնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման, նպատակների և գործառնությունների իրականացման համար:

2) առաջարկություններ է ներկայացնում նախարարին՝ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի նպատակների վերաբերյալ:

3) իր իրավասության սահմաններում տալիս է հանձնարարականներ, կարգադրություններ ու ցուցումներ:

4) իր իրավասության սահմաններում նախարարին ներկայացնում է առաջարկություններ՝ կենտրոնի աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

5) նախարարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

6) ապահովում է նախարարի հրամանների և ցուցումների հանձնարարականների կատարումն ու արդյունքների մասին տեղեկացում նախարարին:

7) նախարարին ներկայացնում է առաջարկություններ կենտրոնի աշխատողների թվի մասին:

8) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

9) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

15. Կենտրոնի տնօրենի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, նրան փոխարինելու հարցը կարգավորվում է նախարարի հրամանով:

**5. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

16. Օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարության և սույն կանոնադրություններով կենտրոնին վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

17. Կենտրոնի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

28 ապրիլի 2021թ.

N 390-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 19-Ի N 385-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 709 և 2009 թվականի հունվարի 29-ի N 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի «ԱՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բաժնում լրացնել հետևյալ բովանդակությամբ «Սոցիալական շտապ օգնության կենտրոն» տող և 19.5-19.8-րդ տողեր.

«

|      | Սոցիալական շտապ օգնության կենտրոն |      |
|------|-----------------------------------|------|
| 19.5 | Կենտրոնի տնօրեն                   | 3,11 |
| 19.6 | Թեժ գծի օպերատոր                  | 1,73 |
| 19.7 | Սոցիալական աշխատող                | 1,96 |
| 19.8 | Սոցիալական օգնության մասնագետ     | 1,96 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի մայիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

28 ապրիլի 2021թ.

N 392-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 17-Ի N 222-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 17-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 222-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետի՝

ա. «ա» պարբերությունում «կամ համատեղությամբ բնակվող զավակ» բառերը փոխարինել «, բացառությամբ պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված, մահացած, անհայտ բացակայող համարվող կամ հաշմանդամություն ձեռքբերած զավակ ունեցող ծնողի» բառերով,

բ. «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում գործունեություն իրականացրած իրավաբանական անձ (բացառությամբ ոչ առևտրային կազմակերպությունների), որի միակ մասնակիցը (բաժնետերը) կամ կանոնադրական կապիտալի ավելի քան գումարային 60 տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ամուսինները կամ համատեղությամբ բնակվող ծնողները (բացառությամբ պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված, մահացած, անհայտ բացակայող համարվող կամ հաշմանդամություն ձեռքբերած զավակ ունեցող ծնողի) գորահավաքային գորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստագորայիններ չեն»:

2) 20-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «պարտավորությունների» բառից հետո լրացնել «և դրա նկատմամբ հետագայում հաշվեգրված տոկոսագումարների» բառերը,

բ. 2-րդ ենթակետում «50%-ի չափով, բայց ոչ ավել, քան 2 000 000 000.0 ՀՀ դրամը» բառերը փոխարինել «85%-ի և դրա նկատմամբ հետագայում հաշվեգրված տոկոսագումարների չափով» բառերը.

3) 21-րդ կետում «50» թիվը փոխարինել «85» թիվով և հանել «Աջակցության գումարը չի կարող գերազանցել 2 000 000 000.0 ՀՀ դրամը» նախադասությունը.

4) 21.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.2-րդ նոր կետ.

«21.2. 20-րդ և 21-րդ կետերով սահմանված աջակցությունը տրամադրվում է մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը՝ տարածամկետ վճարմամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2021թ.

N 397-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻՉԱՅԻՆ  
ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՐ «2021» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻՉԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ  
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ալցիզային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

5) 410 տողից՝ 410.1 տողում առանձնացվում են բնակելի շենքեր առանց ներքին հարդարման՝ առատադրների, պատերի, միջնապատերի հարդարում, դռների տեղադրում, պատերի և հատակների ծածկապատում խեցեգործական, բետոնե կամ քարե սալիկներով, հատակների ծածկապատում մանրատախտակով և փայտե այլ ծածկերով, գորգե և լինոլեումի պատվածքներով, պատերի պատառապատում, ներկարարական, ապակեպատման աշխատանքների իրականացում և այլն.

6) 413 տողում արտացոլվում են գործարկած բնակելի շենքերի բնակարանների քանակը (հատ):

24. **«Նախադպրոցական ու սուսնական հաստատություններ»** տողում արտացոլվում են գործարկած նախադպրոցական ու սուսնական հաստատությունների հզորությունները՝ տեղերը, շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

25. **«Հանրակրթական ու սուսնական հաստատություններ (դպրոցներ)»** տողում արտացոլվում են գործարկած հանրակրթական ու սուսնական հաստատությունների (դպրոցների) հզորությունները՝ տեղերը, շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

26. **«Հիվանդանոցներ»** տողում արտացոլվում են գործարկած լայն պրոֆիլի բուժական և վիրաբուժական հիվանդանոցների, ծննդատների, մանկական հիվանդանոցների, մասնագիտացված առողջարանների, հիվանդությունների կանխարգելման ու վերականգնողական կենտրոնների, ռազմական հոսպիտալների, քրեակատարողական հիմնարկների հիվանդանոցների հզորությունները՝ մահճակալների քանակը, շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

27. **«Առաջնային բժշկական օգնության հաստատություններ (պոլիկլինիկաներ)»** տողում արտացոլվում են գործարկած պոլիկլինիկաների (անկախ և հիվանդանոցներին կից), ամբուլատորիաների, դիսպանսերների, կանանց և մանկական կոնսուլտացիոն, բժշկական և ստոմատոլոգիական հաստատությունների հզորությունները՝ հաճախումներ մեկ հերթափոխում, շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

28. **«Առողջության առաջնային պահպանման կենտրոններ»** տողում արտացոլվում են գործարկած առողջության առաջնային պահպանման կենտրոնների մակերեսները (քառակուսի մետր) և շենքերի քանակը (հատ):

29. **«Մշակութի, զվարճությունների և հանգստի բնագավառի հաստատություններ»** տողում արտացոլվում են գործարկած գրադարանների, արխիվների, խաղատների, սկումբների, սպորտի բնագավառի, զվարճությունների և հանգստի համար նախատեսված հաստատությունների մակերեսները (քառակուսի մետր) և շենքերի քանակը (հատ):

30. **«Հյուրանոցներ և համանման բնակատեղեր»** տողում արտացոլվում են գործարկած հյուրանոցների, քեմ փինգների, մոթելների, հանգրվանների և այլնի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

31. **«Ռեստորաններ և հանրային սննդի օբյեկտներ»** տողում արտացոլվում են գործարկած ռեստորանների և հանրային սննդի օբյեկտների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

32. **«Մեծածախ և մանրածախ առևտրի բնագավառի օբյեկտներ»** տողում արտացոլվում են գործարկած բոլոր տեսակի ապրանքների մեծածախ և մանրածախ առևտրի օբյեկտների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

33. **«Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության բնագավառի շենքեր և շինություններ»** տողում արտացոլվում են գործարկած գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության բնագավառների շենքերի և շինությունների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

34. **«Փոխադրումների (տրանսպորտի) բնագավառի շենքեր և շինություններ»** տողում արտացոլվում են գործարկած փոխադրումների (տրանսպորտի) երկաթուղային, օդային և այլն) բնագավառի շենքերի և շինությունների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

35. **«Ճանապարհների շինարարություն»** տողում արտացոլվում են գործարկած ճանապարհների հզորությունները՝ երկարությունները (կիլոմետր):

36. **«Տեղեկատվության և կապի բնագավառի շենքեր և շինություններ»** տողում արտացոլվում են գործարկած տեղեկատվության և կապի բնագավառի (հրատարակչական, հեռուստատեսության, հեռահաղորդակցության և այլն) շենքերի և շինությունների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ):

37. **«Հանքագործական արդյունաբերություն»** տողում արտացոլվում են հանքագործության բնագավառում հանքանյութերի հանքահանման և այլն գործարկած հզորությունները՝ (տոննա):

38. **«Մշակող արդյունաբերության շենքեր և շինություններ»** տողում արտացոլվում են գործարկած մշակող արդյունաբերության բնագավառի շենքերի և շինությունների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ), համապատասխան հզորությունները:

39. «Ա» պունակում նշվում է մշակող արդյունաբերության արտադրատեսակների անվանումը, իսկ «Գ» պունակում՝ հզորության չափման միավորը: Օրինակ՝

1) *պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի, էլեկտրասարքավորանքի արտադրության* բնագավառում՝ մետաղահատ գործիքների, էլեկտրաշարժիչների, համակարգիչների և այլ արտադրատեսակների արտադրություն, դրանց հզորության չափման միավորն է քանակը՝ հատ.

2) *մետաղագործական արդյունաբերության* բնագավառում՝ պլյումինե գլանվածքների և, փայլաթիթեղների, պղնձի, մոլիբդենի և ցինկի խտանյութերի, մոլիբդենի բրիկետների, պողպատյա խողովակների և այլ արտադրատեսակների արտադրություն, դրանց հզորության չափման միավորն է՝ տոննա.

3) *քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության* բնագավառում՝ լաքաներկանյութերի, լվացող, մաքրող և օսլայող միջոցների, պլաստմասե և այլ արտադրատեսակների արտադրություն, դրանց հզորության չափման միավորն է՝ տոննա.

4) *հանքային պարարտանյութերի արտադրության* բնագավառում՝ ազոտի, ֆոսֆորի, կալիումի, համալիր արտադրություն, դրանց հզորության չափման միավորն է՝ հազար տոննա.

5) *բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների, թղթի և ստվարաթղթի արտադրության* բնագավառում՝ շինափայտի, աղոցանյութերի, թղթի, ստվարաթղթի, ստվարաթղթե արկղների և այլ արտադրատեսակների արտադրություն, դրանց հզորության չափման միավորն է՝ տոննա.

6) *ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության* բնագավառում՝ հավաքովի երկաթբետոնե կառուցվածքների և իրերի, ոչ հանքային շինանյութերի, բնական քարից երեսպատման սալերի, դրանց հզորության չափման միավորն է՝ տոննա, պլյումինե և մետաղապլաստե դրների և պատուհանների՝ հատ, և այլ արտադրատեսակների արտադրություն.

7) *մանածագործական և հագուստի արտադրության* բնագավառում՝ գորգերի, գորգեղենի, գործվածքների և այլն, դրանց հզորության չափման միավորն է՝ տոննա,

գուլպեղենի, տրիկոտաժեղենի և այլն՝ հատ, և այլ արտադրատեսակների արտադրություն.

8) *սննդամթերքի արտադրության* բնագավառում՝ մսի, մսամթերքի, պանրի, շաքարավազի և այլն արտադրատեսակների արտադրություն, դրանց հզորության չափման միավորն է՝ տոննա, խմիչքների՝ ոգելից խմիչքների և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն՝ հազար լիտր և ծխախոտի արտադրատեսակների արտադրություն՝ միլիոն հատ.

9) *«Մշակող արդյունաբերության բնագավառի շենքեր և շինություններ»* արտադրատեսակների անվանումները, որոնք նշված չեն հրահանգում, ենթակա են լրացման ազատ տողերում՝ համաձայն «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» (ՏԳՏԴ2-րդ խմբագրությամբ):

40. *«Էլեկտրականության և գազի մատակարարում»* տողում արտացոլվում են գործարկած էլեկտրակայանների, էլեկտրաֆիկացման և գազաֆիկացման հզորությունները՝ կիլովատ և երկարություն (կիլոմետր):

41. 4-րդ բաժնի *«Այլ շենքեր և շինություններ»* տողում և ազատ տողերում լրացման ենթակա են այն բնագավառների տվյալները, որոնք նշված չեն հաշվետվությունում, մասնավորապես՝

1) *«Բանկեր»* տողում լրացվում են գործարկած բանկերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ).

2) *«Շրջակա միջավայրի պահպանման օբյեկտներ»* տողում լրացվում են գործարկած շրջակա միջավայրի պահպանման օբյեկտների կեղտաջրերի մաքրման կայանների հզորությունները՝ հազար խորանարդ մետր օրում (կեղտաջրեր), նավթանյութերի, ավելցուկների հավաքման սարքերի քանակը (հատ), շրջանառու ջրամատակարարման համակարգերի՝ հազար խորանարդ մետր օրում, արտանետվող գազերից վնասակար նյութերի մաքրման կայանների՝ տոննա վնասակար նյութեր տարում և հազար խորանարդ մետր գազ մեկ ժամում, արդյունաբերական, կենցաղային և այլ թունավոր թափոնների վերականգնման, չեզոքացման (այրման) և թաղման օբյեկտների քանակը (հատ).

3) *«Առողջարաններ»* տողում լրացվում են գործարկած առողջարանների հզորությունները՝ մահճակալների քանակը, ինչպես նաև առողջարաններին կից ամառային ննջարանային մասնաշենքերում մահճակալների քանակը և շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առողջարան-պրոֆիլակտորիաների գործարկումը լրացվում են նաև առանձին.

4) *«Մարզադահլիճներ»* տողում լրացվում են գործարկած մարզադահլիճների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ): Այս տողում հաշվի են առնվում ինչպես առանձին կառուցվող շենքերում, այնպես էլ շենքերի առաջին հարկերում և դրանց կից տեղաբաշխվող մարզադահլիճների, ինչպես նաև բոքսի, ըմբռնարտի, մարմնամարզության, ծանրամարտի և այլնի մասնագիտացված մարզադահլիճները.

5) *«Լողավազաններ»* տողում լրացվում են գործարկած տաքացվող բացօթյա և ծածկած լողավազանների քանակը (հատ): Այս տողում հաշվի են առնվում նաև այն լողավազանները, որոնք տեղաբաշխված են շինություններին կից և դրանց ներսում, ներառյալ նաև այլ մարզական համալիրներում կառուցվածները.

6) *«Հարթակային կառուցվածքներ»* տողում լրացվում են գործարկած ֆուտբոլային դաշտերի, բասկետբոլի, վոլեյբոլի հարթակների, թենիսի հրապարակների և բացօթյա այլ խաղահրապարակների քանակը (հատ).

7) *«Բարձրագույն ուսումնական հաստատություններ»* տողում լրացվում են գործարկած համալսարանների, ինստիտուտների, ակադեմիաների, կոնսերվատորիաների շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ).

8) *«Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններ»* տողում լրացվում են գործարկած նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև արհեստագործական գործող ուսումնարանների, այլ մասնագիտական ուսումնական հաստատությունների, ուսումնական կենտրոնների, քոլեջների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ).

9) *«Բենզադակայաններ»* տողում լրացվում են գործարկած բենզադակայանների քանակը (հատ).

10) *«Հակահրդեհային կայաններ»* տողում լրացվում են գործարկած հակահրդեհային կայանների քանակը (հատ).

11) **«Մեքենաների տեխսպասարկման կայաններ»** տողում լրացվում են գործարկած մեքենաների տեխսպասարկման կայանների քանակը (հատ)։

12) **«Սպանդանոց»** տողում լրացվում են գործարկած սպանդանոցների քանակը (հատ)։

13) **«Ղեղատներ»** տողում լրացվում են գործարկած ղեղատների մակերեսները (քառակուսի մետր) և քանակը (հատ)։

14) **«Զրատար»** տողում լրացվում են գործարկած ջրընդունման կառույցների, պոմպային կայանների, ջրի կուտակման ավազանների, ջրատարների, մաքրման քաղաքային ցանցերի և ջրամատակարարման այլ օբյեկտների հզորությունների վերաբերյալ տվյալները։ Գործարկած ջրատարների տվյալները բերվում են չափման երկու միավորներով. ջրատարի հզորությունը՝ մեկ օրում հազար խորանարդ մետր, ջրատարների և փողոցային ցանցերի երկարությունը՝ կիլոմետր։ Եթե խողովակները տեղադրված են մի քանի շարքով, ապա ջրատարի երկարությունը որոշվում է բոլոր գծերի ընդհանուր երկարությամբ։ Ներթափանցող ցանցերի՝ շենքերի հետ միացման համակարգի շինարարության տվյալներն այս տողում չեն արտացոլվում։

15) **«Կոյուղի»** տողում լրացվում են գործարկած մաքրման կայանների, պոմպակայանների, փողոցային ցանցերի, կոլեկտորների և կոյուղու այլ օբյեկտների հզորությունների վերաբերյալ տվյալները։ Գործարկած (շահագործման հանձնված) կոյուղիների համար ներկայացվում են դրանց հզորությունը (թողունակությունը)՝ չափման միավորը՝ հազար խորանարդ մետր կեղտաջրեր /օր, կոլեկտորների և ցանցերի երկարությունը՝ կիլոմետր։

16) **«Ջերմամատակարարում»** տողում արտացոլվում են գործարկած քաղաքային մագիստրալ և բաշխիչ ջերմային ցանցերի, ջերմային կետերի, շրջանային կաթսայատների և ջերմամատակարարման այլ օբյեկտների հզորությունների վերաբերյալ տվյալները։ Ջերմամատակարարման ցանցերի գործարկումը լրացվում է ըստ դրանց երկարության՝ կիլոմետրերով, իսկ շրջանային կաթսայատների գործարկումը՝ հեկտոկալորիաներով (Հկալ մեկ ժամում)։ Այս տողում չեն լրացվում ջերմային էլեկտրակայանների և նրանցից սկիզբ առնող մագիստրալ ջերմային ցանցերի, ջերմամատակարարման ներթափանցող ցանցերի և կաթսայատների, նոր կառուցվող շենքերի ջերմամատակարարման շինարարության վերաբերյալ տվյալները։

42. 457 տողում արտացոլվում է հաշվետու տարվա վերջում շինարարության ընթացքում գտնվող բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը (քառակուսի մետր)։



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում քրեական գործ ԸԻԴ/0060/01/2020թ.  
Քրեական գործ ԸԻԴ/0060/01/2020թ.  
Նախագահող դատավոր՝ Հ. Գրիգորյան  
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան  
Կ. Սադյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 21-ին ապրիլի 2021թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը  
(այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

|                                                                                                                |                                                                               |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------|
| նախագահությամբ՝ դատավոր<br>մասնակցությամբ՝ դատավորներ                                                          | Հ.Աբրահամյանի<br>Ի.Կարապետյանի<br>Ա.Աբրահամյանի<br>Գ.Գրիգորյանի<br>Կ.Ղարայանի |
| քարտուղարությամբ՝<br>մասնակցությամբ՝ դատախազ՝<br>տուժողի իրավահաջորդ՝<br>ամբաստանյալ՝<br>ամբաստանյալի պաշտպան՝ | Ի.Արզումանյանի<br>Ա.Ղուլյանի<br>Գ.Ավագյանի<br>Հ.Նազարյանի<br>Ռ.Մարտիրոսյանի   |

դռնբաց դատական նիստում քննելով ըստ մեղադրանքի Հարություն  
Լևոնի Նազարյանի՝ նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի  
3-րդ մասով, քրեական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ  
դատարանի 2021 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ  
Հ.Նազարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Արցախի Հանրապետության ոստիկանության քննչական վարչության  
պետ Ն.Գրիգորյանի (այսուհետ նաև՝ Նախաքննության մարմին) 2019  
թվականի մայիսի 23-ի որոշմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի  
3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է  
թիվ 151013/19 քրեական գործը՝ 2019 թվականի մայիսի 23-ին տեղի ունեցած  
ճանապարհատրանսպորտային պատահարի առթիվ, որի հետևանքով Գևորգ  
Արարատի Սարուխանյանը տեղում մահացել է, Էրիկ Մխիթարի Ավագյանը  
մահացել է հիվանդանոցում, իսկ Հարություն Լևոնի Նազարյանը, Հայկ  
Համլետի Ադոնցը և Սամվել Աղվանի Սիրեկանյանը ստացել են տարբեր  
աստիճանի մարմնական վնասվածքներ:

Նախաքննության մարմնի 2019 թվականի մայիսի 23-ի որոշումներով  
Գ.Սարուխանյանը և Է.Ավագյանը քրեական գործով ճանաչվել են տուժողներ:

Նախաքննության մարմնի 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ տուժող Է.Ավագյանի մայր Գյուլնարա Ավագյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի 2019 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ քրեական գործի նախաքննության ժամկետը 2 ամսով՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 23-ը, երկարացնելու վերաբերյալ միջնորդություն է հարուցվել հսկող դատախազին, որը դատախազի 2019 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ բավարարվել է:

Նախաքննության մարմնի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ տուժող Գ.Սարուխանյանի մայր Գյուլչոբա Սարուխանյանը քրեական գործով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ փաստաբան Ռոբիկ Լևոնի Դավթյանը քրեական գործով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ Գ.Ավագյանի ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի 2019 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ Ս.Սիրեկանյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Հ.Նազարյանը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նախաքննության մարմնի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Նազարյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Քրեական գործը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, 2020 թվականի մայիսի 21-ին մուտք է գործել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան): Գործին տրվել է ԸԲԴ/0060/01/20թ. համարը և ընթացքավորման համար հանձնվել դատավոր Դ.Ավանեսյանին:

Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալի միջնորդության հիման վրա կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2020 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճռով Հ.Նազարյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 6 (վեց) տարի 1(մեկ) ամիս ժամկետով՝ 3 (երեք) տարի ժամկետով նրան գրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից: Հ.Նազարյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Պատժի կրման սկիզբը որոշվել է հաշվել փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2021 թվականի հունվարի 27-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Նազարյանի վերաքննիչ բողոքը մերժել է և նրա նկատմամբ Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ: Վերաքննիչ դատարանի դատավոր (գործով նախագահող) Հ.Գրիգորյանը ներկայացրել է հատուկ կարծիք, գտնելով, որ ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ դատավճիռը պետք է բեկանվի և փոփոխվի ու նրա նկատմամբ նշանակվի 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ, և «Քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Արցախի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 4-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ Հ.Նազարյանը պետք է ազատազրկման ձևով նշանակված պատժից ազատվի:

2021 թվականի փետրվարի 24-ին ամբաստանյալ Հ.Նազարյանը փոստային ծառայության միջոցով բերել է վճռաբեկ բողոք, որը մուտք է գործել Գերագույն դատարան 2021 թվականի մարտի 5-ին:

Գերագույն դատարանի 2021 թվականի մարտի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Տուժողի իրավահաջորդ Գ.Ավագյանը 2021 թվականի մարտի 15-ին (Գերագույն դատարան մուտք է գործել 22.03.2021թ.) ներկայացրել է դիմում, որում խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը թողնել անփոփոխ:

Մեղադրող Ասկերանի շրջանի դատախազության ավագ դատախազ Ա.Ղուլյանը 2021 թվականի մարտի 29-ին ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան:

Դատավարության մյուս մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

1. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2020 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճռով Հարություն Լևոնի Նազարյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ այն բանի համար, որ նա 2019 թվականի մայիսի 23-ին ժամը 14:45-ի սահմաններում, Ասկերան-Ստեփանակերտ ավտոճանապարհի 12-րդ կմ հատվածում՝ ԱՀ Ասկերանի շրջանի «Հայկագով» տեղամասում, վարելով «Լեքսուս» մակնիշի 08LL888 հ/հ ավտոմեքենան, թույլ տալով ԱՀ կառավարության 2008թ. ապրիլի 1-ի թիվ 256 որոշմամբ հաստատված՝ «Ճանապարհային երթևեկության կանոններ»-ի 65-րդ, 67-րդ և 37-րդ կետերի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ԱՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, տվյալ ճանապարհահատվածում երթևեկության համար սահմանված թույլատրելի առավելագույն 60 կմ/ժ գերազանցող մոտ 75,34 կմ/ժ արագությամբ վարելով նշված ավտոմեքենան՝ ավտոմեքենայի ընթացքի ուղղության ձախ կողմից երթևեկելի մասի հանդիպակաց ուղղությունների երթևեկելի ուղեմասերը միմյանցից բաժանող գծանշումը հատող և իր ընթացքի ուղղության երթևեկելի ուղեմաս մուտք գործող հետիոտն Գևորգ Արարատի Սարուխանյանի առկայության պայմաններում, իր վարած ավտոմեքենայի ընթացքի ուղղությունը մանևրել է դեպի աջ՝ ավտոմեքենան դուրս բերելով աջակողմյան կողնակ՝ ինչը տվյալ կոնկրետ դեպքում տեխնիկական տեսակետից հարկադրական բնույթ չի կրել և պայմանավորված չի եղել երթևեկության անվտանգության ապահովման պահանջի տեսանկյունից, և դրանով պայմանավորել է ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, վրաերթի ենթարկել արդեն իսկ իր երթևեկելի ուղեմասն ազատած և իր երթևեկության համար վտանգավոր գոտուց դուրս եկած հետիոտն Գ.Սարուխանյանին, ինչի հետևանքով վերջինս ստացած կյանքին անհամատեղելի մարմնական վնասվածքներից տեղում մահացել է, իսկ ավտոմեքենան, ընկնելով ճանապարհի աջ կողնակին հաջորդող կյուվետը և դառնալով անկառավարելի, ընկել է կողասահքի մեջ, կողաշրջվելով դուրս է եկել երթևեկելի մասից և մնացել անիվների վրա կանգնած վիճակում, ինչի հետևանքով նույն ավտոմեքենայի ուղևորներից Է.Ավագյանը ստացած մարմնական վնասվածքներից նույն օրը՝ ժամը 16:10-ին ԱՀ «Հանրապետական

բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մահացել է, իսկ Ս.Սիրեկանյանի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր վնաս:

2. Առաջին ատյանի դատարանը, վերլուծելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 47-րդ, 59-րդ, 69-րդ, 253-րդ հոդվածների պահանջները, վկայա կոչելով ԸԻԴ/0064/01/18 քրեական գործով Գերագույն դատարանի 2019 թվականի հունվարի 16-ի որոշման դրույթները, արձանագրելով, որ ըստ դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 330/19 եզրակացության՝ ամբաստանյալն ավտոմեքենան վարել է տվյալ ճանապարհահատվածում տրանսպորտային միջոցների երթևեկության համար սահմանված թույլատրելի առավելագույն 60 կմ/ժ-ը գերազանցող՝ մոտ 75.34 կմ/ժ-ից բարձր արագությամբ, և իր վարած ավտոմեքենայի ընթացքի ուղղությունը դեպի աջ մանևրելն ու ավտոմեքենան աջակողմյա կողնակ դուրս բերելը տեխնիկական տեսակետից հարկադրական բնույթ չի կրել և պայմանավորված չի եղել երթևեկության անվտանգության ապահովման պահանջներով, գտել է, որ գործով առկա չեն ամբաստանյալ Հ.Նազարյանի՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների, նրա անձը բնութագրող տվյալների բավարար համակցություն, որը կարող է հիմք հանդիսանալ համոզվելու, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նրան հասարակությունից մեկուսացնելու:

3. Վերաքննիչ դատարանը, քննարկելով ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության, ինչպես նաև ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կիրառելու հնարավորության մասին վերաքննիչ բողոքի հիմքերը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված՝ ամբաստանյալ Հ.Նազարյանի անձը բնութագրող և նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները չեն վկայում այն հասարակական վտանգավորության մասին, որը բնորոշ է Հ.Նազարյանի կատարած արարքին, քանի որ այն կատարվել է ճանապարհային երթևեկության կանոնները չարամիտ խախտելու հետևանքով: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և Հ.Նազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ պատժատեսակ ու պատժաչափ ընտրելիս, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս պահպանել է օրինականության, արդարության, պատժի անհատականացման և մարդասիրության վերաբերյալ՝ քրեական օրենսգրքից բխող համապատասխան սկզբունքները, ինչն էլ բավարար է սոցիալական արդարությունը վերականգնելու, ամբաստանյալին ուղղելու, ինչպես նաև նոր հանցագործություններ կանխելու համար:

4. Գերագույն դատարանն ԸԻԴ/0064/01/18 քրեական գործով իր 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ արձանագրել է, որ «...երթևեկության կանոնների առավել կոպիտ խախտումները՝ լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը ...և այլն վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: ...Բացի այդ, դատարանները պետք է գնահատեն, թե տվյալ խախտման արդյունքում, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը և որքանով էր ակնհայտ տրանսպորտային

միջոցը վարողի համար իր կողմից թույլ տրված խախտման և հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման միջև պատճառական կապի զարգացման հավանականությունը:»:

5. Տուժող Գևորգ Սարուխանյանի իրավահաջորդ Գյուլչորա Սարուխանյանը, ի պատասխան ամբաստանյալի վերաքննիչ բողոքի, 2021 թվականի հունվարի 18-ին գրավոր դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան, որում նշել է, որ ամբաստանյալը պետք է կրի ռեալ պատիժ, և դեմ է արտահայտվել համաներման ակտի կիրառմանը (հատոր 3-րդ, գ.թ.120):

6. Տուժող Էրիկ Ավագյանի իրավահաջորդ Գյուլնարա Ավագյանը, ի պատասխան ամբաստանյալի վճռաբեկ բողոքի, 2021 թվականի մարտի 15-ին Գերագույն դատարան ներկայացրած գրավոր դիմումով խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը թողնել անփոփոխ (հատոր 4-րդ, գ.թ.29):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը բերվել է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի խստություն և համաներման ակտը չկիրառելու մասով:

Բողոքում նշվել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածով և 372-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներով, 47-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ, 69-րդ հոդվածներով նախատեսված նյութական և քրեադատավարական նորմերի պահանջների խախտումներ:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Շարադրելով վերը նշված իրավական նորմերի բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ գործող քրեական օրենսգրքը դատարանին հնարավորություն է տալիս անհրաժեշտ հիմքերի առկայության պայմաններում մարդասիրական վերաբերմունք դրսևորել հանցանք կատարած անձի նկատմամբ, այն է՝ ազատել քրեական պատասխանատվությունից, նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, պատիժը պայմանականորեն չկիրառել, դնելով նրա վրա որոշակի պարտականություններ: Մինչդեռ, դատարաններն անտեսել են նշված դրույթների պահանջները: Ըստ բողոքի՝ օրենքով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, գտնվելով հանցակազմի սահմաններից դուրս, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել ինչպես պատժի չափը և տեսակը որոշելիս, այնպես էլ՝ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

Ըստ բողոքի՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի, այնպես էլ պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարված հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բազմակողմանի ու օբյեկտիվ գնահատման վրա, նպատակ ունենալով ապահովելու ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

Մեջբերելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի՝ պատժի նշանակումը հիմնավորող մասը, այն է՝ «Դատարանն ամբաստանյալ Հ.Նազարյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք

Է հաշվի առնում՝ առաջին անգամ հանգամանքների պատահական գուգորդմամբ միջին ծանրության հանցանք կատարելը, խոստովանական ցուցմունքներ տալով հանցագործության բացահայտմանն աջակցելը, կատարած հանցանքի համար զղջալը, հանցագործությամբ պատճառված վնասները հարթված լինելը, պատիժը նշանակելու պահին խնամքին մինչև 14 տարեկան 2 անչափահաս երեխաների առկայությունը, ինչպես նաև 2-րդ խմբի հաշմանդամ լինելը: Դատարանն ամբաստանյալ Հ.Նազարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում: Դատարանը Հ.Նազարյանի անձը բնութագրող հանգամանք է դիտում բնակության վայրից բացառապես դրական բնութագրվելը և նախկինում դատապարտված չլինելը:», բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը ճիշտ չի գնահատել գործի բնույթը և իր պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, որոնք ապացուցում են իր ուղղված և վերադաստիարակված լինելը, ինչը հիմք է իր նկատմամբ հողվածով նախատեսված նվազագույն պատիժ, այլ ոչ թե 6 տարի 1 ամիս ազատազրկում (որպեսզի իր նկատմամբ չկիրառվի համաներման ակտը) նշանակելու կամ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կիրառելու համար:

Բողոքաբերի կարծիքով՝ իր նկատմամբ պատիժ է նշանակվել օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման, սոցիալական արդարության վերականգնման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն ամբազրող հողվածների (ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 47-րդ և 59-րդ), ինչպես նաև ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջների անտեսմամբ, ինչի հետևանքով իր նկատմամբ դատարանները նշանակել են ակնհայտ խիստ պատիժ՝ զրկելով ազատությունից: Այսինքն՝ դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի խախտումներ, չի կիրառվել այն հողվածը, որը ենթակա է կիրառման, և դա հանգեցրել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը:

Գերագույն դատարանին խնդրում է հաշվի առնել նաև, որ տվյալ պատահարի հետևանքով ստացել է առողջության ծանր վնասվածք, 2-րդ խմբի հաշմանդամ է, տուժողների իրավահաջորդները և տուժողը բողոքներ ու պահանջներ չունեն, հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, ամուսնացած է, ունի երկու անչափահաս երեխա:

Մեջբերելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 7-րդ, ԱՀ Մահմանադրության 22-րդ, 50-րդ, 61-րդ, ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 49-րդ, 59-րդ, 60-րդ, 69-րդ, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ, 422-րդ, 424-րդ, 425-րդ, 427-րդ հոդվածները, բողոքաբերը խնդրել է Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի 2021 թվականի հունվարի 27-ի որոշումը բեկանել և փոփոխել, իր՝ ամբաստանյալ Հ.Նազարյանի, նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակել մինչև 6 տարի ազատազրկման ձևով պատիժ, կիրառել նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման նպատակով Արցախի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված համաներման ակտի 2-րդ գլխի 2-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը և իրեն ազատել պատժի կրումից, իրեն զրկելով մինչև մեկ տարի ժամկետով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, կամ նշանակված 6 տարի 1 ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատիժը՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ,

պայմանականորեն չկիրառել, սահմանելով փորձաշրջան՝ մինչև մեկ տարի ժամկետով, գրկելով տրանսպարտային միջոց վարելու իրավունքից:

### **3.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքի պատասխանում մեղադրող Ա.Ղուլյանը, շարադրելով գործի դատավարական նախապատմությունը, գործի հանգամանքները, վճռաբեկ բողոքի հիմքերը, ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 47-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը, վերլուծելով նույն օրենսգրքի 253-րդ հոդվածը, Գերագույն դատարանի՝ ԸԲԴ/0064/01/18 քրեական գործով 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, նշել է, որ ամբաստանյալ Հ.Նազարյանն անհիմն կերպով չարամտորեն թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների կոպիտ խախտում, և դատարանը նշված իրավական կարգավորումների և մեկնաբանությունների լույսի ներքո գնահատելով քրեական գործի փաստական հանգամանքները, Հ.Նազարյանի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ՝ հաշվի առնելով նրա կողմից կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, անձը բնութագրող տվյալները՝ այդ թվում նաև վերջինիս պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները: Նշանակված պատիժը բավարար է նրան ուղղելու և վերադաստիարակելու, սոցիալական արդարությունը վերականգնելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել և բողոքարկված 24.09.2020թ. դատավճիռը և Վերաքննիչ դատարանի 27.01.2021թ. որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանների կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ըստ էության վճռաբեկ բողոքում բարձրացվել են ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության (այն է՝ իիստ լինելու պատճառաբանությամբ) և համաներում կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերը: Հետևաբար, Գերագույն դատարանի առջև բարձրացված իրավական հարցերը հետևյալն են. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ նշանակված պատիժը (պատժատեսակը, պատժաչափը), ազատագրկման ձևով նշանակված պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները, թե՛ ոչ:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքի և սահմանների շրջանակներում վերանայելով Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և բողոքարկված որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական աստիճանի կողմից վերանայման իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված

պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որևէ հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից օրենքի համաձայն:

ԼՂՀ քրեական օրենսգրքի՝ «Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Վերը նշված և քրեական օրենսդրության խնդիրները և սկզբունքները սահմանող մյուս իրավանորմերի (օրինակ՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 11-րդ հոդվածներ) վերլուծությունից հետևում է, որ պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղկացուցիչ մասերից մեկն է, և պատիժ նշանակելիս դատարանները պետք է ղեկավարվեն հետևյալ սկզբունքներով՝ 1) օրինականության, 2) արդարության, 3) պատժի անհատականացման, 4) մարդասիրության:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը, ի թիվս այլ հարցերի, լուծում է հետևյալ հարցերը. ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ, ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր գործով պատժի, նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցերը լուծելու վերաբերյալ դատարանի որոշումը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հիմնված լինի կատարված հանցագործության առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը: Իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Գերագույն դատարանը փաստում է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական,



քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծն աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը և այլն):

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ քրեական օրենսգրքում ամրագրված պատիժների համակարգն արտահայտում է քրեական իրավունքի հիմնական, առաջին հերթին՝ օրինականության, արդարության և մարդասիրության սկզբունքները: Նշված սկզբունքները հաշվի առնելով, հանցավորության դեմ պայքարում օրենսդիրը կարևորել է քրեաիրավական միջոցների խստացումը ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ու չարամիտ հանցագործների նկատմամբ, և ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների շրջանակի սահմանափակումը նվազ վտանգավոր հանցագործությունների և հանցագործների համար:

Գերագույն դատարանը փաստում է, որ պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենսգրքով նախատեսված պահանջներից ելնելով, հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

Դատավճռում պետք է հիմնավորվեն ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատժատեսակների և դրանց ժամկետների հետ կապված հարցերը: Մասնավորապես, դատավճռի պատճառաբանական մասում պետք է անպայման նշվեն այն շարժառիթները, որոնք հիմք են հանդիսացել պատժի այս կամ այն տեսակի, չափի նշանակելու կամ լրացուցիչ պատիժ նշանակելու համար:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների թվին է դասում նաև առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը (կետ 1-ին), պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը (կետ 4-րդ), հանցագործությունը բացահայտելուն ... աջակցելը (կետ 9-րդ), հանցագործությամբ պատճառված գույքային և բարոյական վնասը կամովին հատուցելը... (կետ 10-րդ): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի 1-ին մասում: Այսինքն՝ մեղմացուցիչ հանգամանքների ցանկը սպառնիչ չէ:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ մեղմացուցիչ հանգամանքների իրավական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք նվազեցնում են կատարված հանցագործության և հանցավոր անձի հասարակական վտանգավորության աստիճանն ու ազդում են ոչ միայն դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ կոնկրետ պատժի ընտրության վրա, այլև հաշվի են առնվում քրեական պատասխանատվությունից ազատելու, պայմանական ազատագրելու նշանակելու և այլ հարցերի լուծման ժամանակ: Մեղմացուցիչ հանգամանքների բնույթը կարող է դատարանին հիմք տալ դրանք դիտարկել որպես բացառիկ հանգամանքներ և նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ (ԼՂՀ քրեական օրենսգրքի հոդված 62-րդ):

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ընտանեկան դրությունը ևս կարող է դիտվել որպես անձի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այլ հանգամանք: Ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն անխուսափելիորեն ազդում է նրա ընտանիքի

անդամների վրա, և կախված ընտանիքի կյանքում անձի ունեցած դերից, այն կարող է նաև ծանր կացության մեջ դնել վերջիններիս:

Սակայն յուրաքանչյուր գործով պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները դատարանը գնահատում է՝ առաջին հերթին հաշվի առնելով հանցանքի ծանրությունը:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Առաջին աստիճանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ամբաստանյալին բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ նշանակել է պատիժ ԼՂ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սանկցիայի շրջանակում: Գործով կա երեք տուժող (երկուսը մահացել են, երրորդի առողջությանը պատճառվել է ծանր վնաս):

Տուժողի իրավահաջորդ Գ.Սարուխանյանը, չներկայանալով դատական նիստերին, Վերաքննիչ դատարանին հասցեագրված իր՝ 18.02.2021թ. գրավոր դիմումում, գտնելով, որ ամբաստանյալը պետք է կրի ռեալ պատիժ, դեմ է արտահայտվել համաներման ակտի կիրառմանը: Տուժողի իրավահաջորդ Գ.Ավագյանը, ի պատասխան վճռաբեկ բողոքի, Գերագույն դատարանին հասցեագրված դիմումում խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը թողնել անփոփոխ:

Քրեական պատժողական քաղաքականության վրա համաներման ակտի ազդեցության վերաբերյալ Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ԼՂ քրեական օրենսգրքի՝ «Համաներումը» վերառությամբ 81-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ պետության օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը կարող է ընդունել նորմատիվ ակտ, որն ինչոր չափով փոփոխում է պատժողական քաղաքականությունը (որը կարող է և չհամընկնել դատական պրակտիկայով ձևավորված պատժողական քաղաքականության հետ):

Համաներումը՝ որպես պետաիրավական ակտ, օժտված է հետևյալ հատկանիշներով՝

1. Այն նորմատիվ բնույթ ունի, այսինքն տարածվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի վրա:

2. Համաներման նախաձեռնությունը բխում է պետական մարմնից:

3. Համաներման ակտերն ունեն համապարտադիր բնույթ, ինչպես այդ ակտերը կիրառող իրավապահ մարմինների, այնպես էլ այն անձանց համար, որոնց վրա տարածվում է համաներումը: Միակ բացառությունն այն անձինք են, ովքեր իրենց մեղավոր չեն ճանաչում և պնդում են, որպեսզի անպայման դատական քննություն իրականացվի:

4. Համաներման ակտը միայն նորմատիվ հիմք է ստեղծում անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համար: Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու իրավաբանական հիմք է հանդիսանում իրավունքի նորմի կիրառման անհատական ակտը, այդ թվում՝ դատարանի մեղադրական դատավճիռը: Եվ դատարանները քրեական գործեր քննելիս յուրաքանչյուր կոնկրետ անձի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնեն պետության կողմից ընդունված

համաներման ակտի նպատակը և արդարադատությունն իրականացնեն այդ ակտին համահունչ:

Միաժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պետք է նկատի առնվի, որ պատժողական ճիշտ քաղաքականությունը կարող է էական դեր կատարել հանցավորության նկատմամբ վերահսկողության, հանցավորությունը որոշակի մակարդակի վրա պահելու գործում: Գերագույն դատարանը պատժի նշանակման հարցին անդրադարձել է նախկինում կայացրած իր մի շարք որոշումներում (այդ թվում՝ սույն գործով ստորադաս դատարանների կողմից վկայակոչված): Գերագույն դատարանը փաստել է, որ պատիժ նշանակելիս և նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս պետք է հաշվի առնել տվյալ ժամանակահատվածում քրեական օրենսդրությամբ պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պատիժ նշանակելիս և համաներման կիրառելիության հարցը քննարկելիս դատարանը հավասարապես պետք է հաշվի առնի և՛ ամբաստանյալի, և՛ պետության, և՛ հասարակության, և՛ տուժողի շահերը, քանի որ պատժի խստությունը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորությանը, ինչպես նաև ամբաստանյալի անձին: Նման համապատասխանությունը որոշակի առումով սոցիալական արդարության վերականգնումն է, ամբաստանյալի կողմից պետության, հասարակության և տուժողի հանդեպ մեղքի քավումը: Նշվածի կապակցությամբ Գերագույն դատարանը փաստում է, որ իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները վերաբերում են նաև հանցագործությունից տուժած անձանց, և վերջիններս հավասարապես օգտվում են ԱՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված երաշխիքներից:

«Քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքն ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին՝ նպատակ ունենալով մեղմացնել նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքները: Համաներման կիրառման շրջանակները լայն են: Մասնավորապես, պատժից ազատվում են առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձինք, անձինք, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և այլն: Անզուգույն հանցագործություն կատարելու համար համաներման ակտով նախատեսվում է պատժից ազատում՝ առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրվման դատապարտված անձանց: Համաներման ակտի 2-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված պատժաչափը կրճատվում է երկու երրորդով՝ անզուգույնությամբ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անզույշ հանցագործությունների ճնշող մասը ճանապարհատրանսպորտային հանցագործություններն են: Դրանք դրսևորվում են հանցավոր ինքնավստահության կամ հանցավորի անփութության արդյունքում: Հանցանքը համարվում է հանցավոր ինքնավստահությամբ կատարված, եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն, հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզուգույնությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Նշված իրավական նորմի սանկցիայի՝ 4-ից 10 տարի ազատազրկման ձևով պատժից Առաջին ատյանի դատարանն ընտրել է 6 տարի 1 ամիս ժամկետով ազատազրկումը և լրացուցիչ պատիժը՝ 3 տարի ժամկետով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկումը:

Ամբաստանյալի հանդեպ պատիժ նշանակելու, ամբաստանյալի կողմից այն կրելու, համաներման ակտը կիրառելու կարգավորումներից հետևում է, որ այն դեպքերում, երբ դատարանի կողմից նշանակված պատժի տեսակից և չափից է կախված համաներման ակտի կիրառումը, դատարանը, պահպանելով օրենսդրության պահանջները, յուրաքանչյուր կոնկրետ գործով ինքն է որոշում, ելնելով գործի հանգամանքներից, այդ ակտի կիրառելիության հարցը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Գերագույն դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է նույն օրենսգրքի 415-րդ և 416-րդ հոդվածների կանոններով:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը» վերտառությամբ 413-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ կետերի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը...

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին...

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը» վերտառությամբ 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը քրեական օրենքի կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Նշանակված պատժի անհամապատասխանությունը հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին» վերտառությամբ 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում է կամ խստացնում պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք է հանդիսանում, ի թիվս այլնի, դատավճռով նշանակված պատժի (ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով)

անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Վերաքննիչ դատարանը, իր առջև բարձրացնելով այն հարցը, թե արդյո՞ք հիմնավոր են ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ռեալ կրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները, չգտնելով նրա նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ, համաձայնվելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը չկիրառելու մասին դատարանի հետևություններին, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ: Գերագույն դատարանն ամբաստանյալ Հ.Նազարյանի նկատմամբ նշանակված պատիժը ևս չի դիտում որպես ակնհայտ խիստ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան, այսինքն՝ պետք է կիրառել Գերագույն դատարանի լիազորությունը, նախատեսված ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Հարություն Լևոնի Նազարյանի նկատմամբ ԱՀ վերաքննիչ դատարանի 2021 թվականի հունվարի 27-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Կ.ՂԱՐՍՅԱՆ**